ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի պատմաբան, հայագիտության բնագավառի ճանաչված կազմակերպիչ, գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանի ծննդյան 80-ամյակը:

Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 22-ին Վրաստանի Մառնեուլի շրջանի Աղքյորփի հայկական գյուղում, ծառայողի ընտանիքում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թ., նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ և այն հաջողությամբ ավարտում 1950 թ.: Ուսման ընթացքում Վ. Բարխուդարյանը դրսևորել է գիտահետազոտական աշխատանքի ակնհայտ հակումներ: Նա ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ երաշխավորվում է ասպիրանտական ուսուցման և համալսարանն ավարտելու նույն տարում ընդունվում ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան: Ասպիրանտական ուսումնառության տարիներին ակադ. Ս. Տ. Երեմյանի ղեկավարությամբ մասնագիտացել է Հայաստանի միջնադարյան պատմության հարցերում: Թեկնածուական ատենախոսության թեմա է ընտրվել «Հայաստանի 9–11-րդ դարերի ավատատիրական հողատիրությունը», որը հաջողությամբ պաշտպանել է 1954 թ.:

Միջնադարյան Հայաստանի պատմության առանցքային խնդիրներից մեկը հանդիսացող այդ թեմայի ուսումնասիրությունը իրականացվել է սկզբնաղբյուրների վերլուծության, երկրի տնտեսական զարգացման խոր հետազոտության, հարակից երկրների սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ զուգահեռներ անցկացնելու հիման վրա, որը և մեծապես նպաստել է ասպիրանտի լայն աշխարհայացքի ձևավորմանը:

1955 թ. Վ. Բ. Բարխուդարյանն աշխատանքի է անցել այն ժամանակ Գիտությունների ակադեմիայի կազմում գործող Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես կրտսեր գիտական աշխատող: Թանգարանում աշխատելու տարիներին ավելի ընդլայնվեց երիտասարդ գիտաշխատողի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Շուտով լույս տեսավ Հայաստա-

նում 1905–1907 թթ. հեղափոխության պատմության վերաբերյալ հրատարակված ուսումնասիրությունների մասին նրա վերլուծական աշխատանքը (1956): 1958 թ. նա աշխատանքի անցավ ԳԱ պատմության ինստիտուտում, իսկ 1990-ից՝ ԳԱ նախագահությունում:

Վ. Բարխուդարյանի գիտական գործունեությունն ընթացել է հայկական գաղթավայրերի, պատմագիտության և հայ-ռուսական հարաբերությունների հիմնահարցերի մշակման ուղղությամբ: Նրա գիտական հետաքրքրությունները պայմանավորված էին ժամանակի առաջադրած պահանջներով: 1950-ական թվականների երկրորդ կեսին անհատի պաշտամունքի քննադատությունը բավականաչափ դրական տեղաշարժեր կատարեց գաղափարական ոլորտում՝ այդ թվում և պատմագիտության մեջ: Թուլացան պաշտոնական ատյաններից պարտադրվող գաղափարական ճնշումները: Գիտությունը սկսեց զբաղվել նախկինում արգելված շատ թեմաներով:

Խորհրդահայ պատմագիտության մեջ ուսումնասիրությունների ոլորտից դուրս մնացած հիմնահարցերից էր հայ գաղթավայրերի պատմությունը: Անտեսվում էր այն էական գործոնը, որ առանց հայկական գաղթավայրերի հնարավոր չէ ներկայացնել հայ ժողովրդի ամբողջական, գիտականորեն հիմնավորված պատմությունը: Նկատի չէր առնվում այն ակնառու հանգամանքը, որ արտերկրում է բնակվել հայության զգալի մասը, որ որոշ պատմափուլերում այնտեղ են գործել գիտության ու մշակույթի հիմնական կենտրոնները:

Վ. Բարխուդարյանն իր գիտական հետազոտությունների առանցքը դարձրեց ուսումնասիրության կարոտ հենց այդ բնագավառը: Նա առաջին մասնագետներից էր, որ, գիտակցելով գաղթավայրերի պատմության հետազոտության կարևորությունը, դարձավ այդ ուղղության համակարգված ու գիտական նորովի ուսումնասիրության սկզբնավորողներից մեկը և իր ուսերի վրա կրեց հիմնախնդրի գիտական մշակման ծանրությունը: Հայտնի է, որ ռուս և հայ ժողովուրդների միջև տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում մեծ էր Ռուսաստանի տարածքում ձևավորված հայկական գաղութների դերը: Դրանց մեջ առանձնանում է հատկապես Կովկասի նախադռներում հաստատված ամենից խոշոր ու հարուստ հայկական կյանքով ապրած գաղութը՝ Նոր Նախիջևանը: Նա ձեռնամուխ եղավ հենց այդ գաղութի պատմության հետազոտմանը:

Վ. Բարխուդարյանը երկար տարիներ աշխատել, պրպտումներ է կատարել Պետերբուրգի, Մոսկվայի, Ռոստովի արխիվներում, Հայաստանի ազգային և Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի արխիվներում, Մատենադարանի արխիվային ու ձեռագրական ֆոնդերում, օգտագործել թեմային առնչվող ողջ գրականությունը, հայկական և ռուսական պարբերական մամուլը: Ժողովել է վիթխարի նյութ, որի մի մասն առաջին անգամ է դրվել գիտական շրջանառության մեջ, և դրա հիման վրա երկու ստվար հատորներում (1967, 1985) շարադրել Նոր Նախիջևանի հայկական գաղութի ամբողջական պատմությունը: Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է տնտեսության զարգացման համար ստեղծված նպաստավոր պայմաններին և այդ պայման-

ներն օգտագործելու հայերի ձեռներեցությանը: Ի տարբերություն ճորտատիրական Ռուսաստանի, Նոր Նախիջևանը և նրա հայկական հինգ գյուղերը զերծ մնացին ճորտությունից, որը և հնարավորություն ընձեռեց տնտեսության անկաշկանդ զարգացման համար: Հայերը խթանեցին տնտեսության որոշակի ճյուղերի, հատկապես ներքին ու արտաքին առևտրի, ճարպի և բրդի արտադրությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը, այգեգործությունը: Նրանք հարավային Ռուսաստանում տարածեցին շերամապահությունը: Դոնի հայության շրջանում մեծ զարգացում ապրեց արհեստագործությունը: Հեղինակը ցույց է տալիս, որ արհեստավորական կազմակերպությունները՝ համքարությունները, ռուսական միջավայրի ազդեցությունը կրելով հանդերձ, հարևնման են եղել Անդրկովկասի հայկական համքարություններին: Արհեստների տնտեսական նշանակությունը բացահայտելուց զատ ցույց է տրվում համքարությունների պահպանողական բնույթը և օտար միջավայրում հայկական բարքերին, ազգային սովորություններին ու մայրենի լեզվին հավատարիմ մնալու, այլ խոսքով, ազգային նկարագիրը պահպանելու դրանց կարևոր նշանակությունը:

Վ. Բարխուդարյանի ուսումնասիրությունն ակնառու է դարձնում հայկական գաղութի նշանակալի տեղը հարավային Ռուսաստանի՝ Նովոռոսիայի գրեթե անմարդաբնակ տափաստանները յուրացնելու, առևտրատնտեսական կյանքը զարգացնելու գործում: Հեղինակը հանգամանորեն լուսաբանել է Նոր Նախիջևանի կապերն ու շփումները հայ-ռուսական հասարակական-քաղաքական կյանքում, կրթության, գրականության ու արվեստի ոլորտներում: Նա Նոր Նախիջևանի օրինակով խորությամբ բացահայտել է այն իրողությունը, որ օտար երկնակամարների տակ ծվարած հայկական համայնքների կենսունակությունը մեծապես պայմանավորված է եղել Մայր Հայրենիքի հետ ունեցած կապերով: Վերջինիս հետ տարբեր ձևերով կապերն ու շփումներն արգասավորում, բեղուն էին դարձնում հայ համայնքների ազգային կյանքը, ամրապնդում նրանց ազգային դիմագիծն ու գոյատևումը: Հեղինակը ճիշտ է բնորոշում Դոնի հայության կատարած ներդրումը՝ նշելով, որ հասուն և առաջադեմ մտավորականության մի ամբողջ փաղանգ ունեցող Նոր Նախիջևանը դարձավ ազգային լիաթոք կյանքով ապրող հայկական նշանավոր կենտրոն և մնայուն ու չխամրող հետք թողեց հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ:

Վ. Բարխուդարյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ ստեղծվեցին հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք հոդվածների ժողովածուներ. «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը 16–18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996): Հունգարահայերի պատմությանը նվիրված ժողովածուն ստեղծվեց Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության և Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում, հունգար և հայ մասնագետների համատեղ ջանքերով: Հունգար պատմաբանները տեղի արխիվներից արժեքավոր նյութեր հայտնաբերեցին և գի-

տական շրջանառության մեջ դրեցին: Նրանց ուսումնասիրությունների շնորհիվ ընդլայնվեցին մեր իմացությունները երկրի ազատագրական պայքարում, պետական կառավարման ու մշակույթի բնագավառներում հունգարահայերի նշանակալի դերի մասին: Այդ ժողովածուի համար Վ. Բարխուդարյանը պարգևատրվեց Հունգարիայի գիտությունների ակադեմիայի մեդալով:

Սույն հիմնահարցին նվիրված աշխատություններում և բազմաթիվ հոդվածներում հեղինակը մշակեց գաղթավայրերի պատմության հայեցակարգային բնույթի հարցեր: Այսպես, օրինակ, ե՞րբ և ի՞նչ պայմաններում կարող ենք խոսել գաղութի կամ համայնքի ձևավորման մասին: Չէ՞ որ արտագաղթի և օտար երկրում հանգրվան գտած որևէ ժողովրդի զանգվածը կարող է ցրվել հյուրընկալ երկրում և համայնքի ձևավորման որևէ կռվան չտալ: Ի՞նչ գործոններից ելնելով կարելի է հավաստել գաղութի կամ համայնքի առկայությունը: Օտար երկրում բնակություն հաստատած որևէ ժողովրդի զանգվածը, եթե պահանջ է զգում ազգային ոգին, մայրենի լեզուն պահպանելու և այդ նպատակով կառուցում է եկեղեցի ու ազգային լեզվով դպրոց է հիմնում, նշանակում է ձևավորվել է համայնքը:

Վ. Բարխուդարյանը տվեց հայ գաղթավայրերի ընդհանուր պատմության պարբերացումը՝ միջնադար, նոր շրջան և նորագույն ժամանակաշրջան: Միջնադարում, որպես կանոն, հայ համայնքները ստանում են առանձնաշնորհումներ և առևտրատնտեսական ձեռներեցությամբ բարեկեցիկ դրություն են ստեղծում: Միաժամանակ նրանք ապրում են միջնադարին հատուկ ներփակ կյանքով: Նոր շրջանում վերացվում են արտոնությունները, ինքնավարությունը մարմնավորող մարմինները (մագիստրատ, ռաթհաուզ և այլն). թվում է, թե գաղութները կկորցնեն նաև ազգային հատկանիշները և կտարրալուծվեն շրջակա միջավայրում: Նոր պայմանները, սակայն, ծնում են նաև նոր հնարավորություններ: Այս փուլում երևան են գալիս բարեգործական տարատեսակ հասարակական կազմակերպություններ, տպագիր խոսքն ու մամուլը: Դրանց և կենդանի հաղորդակցության միջոցով ուժեղանում են կապերը հայրենիքի հետ, որոնց միջոցով արգասավորվում և շարունակվում է համայնքների գոյատևումը: Երրորդ շրջանը մեծ եղեռնի հետևանքով հայ բնակչության տարբեր երկրներ գաղթելն ու հայ սփյուռքի առաջացումն է:

Գաղթավայրերի պատմության ծալքերը բացահայտող մասնագետի կողմից առավել ընդգծվեց և լուսաբանվեց հայ համայնքների հյուրընկալ երկրի պահանջներին ու մայր հայրենիքին միաժամանակ ծառայելու, երկու հայրենիքների գաղափարների լծորդումը, մայր հայրենիքի հետ տարատեսակ կապեր պահպանելու անհրաժեշտությունն ու դրա կենսահաստատ նշանակությունը:

Վ. Բարխուդարյանի հետաքրքրությունների մյուս բնագավառը եղել է երկու ժողովուրդների պատմական կապերի, հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը: Ռուսահայ գաղութների պատմությունն ինքնին հայ-ռուսական հարաբերությունների մի օղակը, նրա մի մասն է կազմում: Դրանից զատ այդ հիմնահարցին նա նվիրել է բազմաթիվ հոդվածներ և աշխատություններ, որոնց մեջ առանձնանում են Վ. Ոսկանյանի հեղինակցությամբ գրված «Հայ-

ռուսական հարաբերությունները և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (1978) և «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության» (2006) աշխատությունները: Այդ երկու աշխատանքներում փաստական նյութերի հիման վրա քննարկվել և արժևորվել են հայ-ռուսական հարաբերությունների բազմապիսի հարցեր:

Պատմագիտության խնդիրները Վ. Բարխուդարյանի նախասիրությունների շրջանակներից երբեք դուրս չեն եղել, սակայն դրանց նա անդրադարձել է գերազանցապես կյանքի առաջադրած պահանջների թելադրանքով: Տակավին 1962 թ. նրան՝ որպես Պատմության ինստիտուտի գիտական քարտուղարի, ի պաշտոնե առաջարկվեց արձագանքել ՍՄԿՊ XXII համագումարին և նրա որոշումների լույսով ներկայացնել ինստիտուտի խնդիրները: Տպագրված հոդվածում Պատմության ինստիտուտի առաջ ծառացած անմիջական հարցերից բացի հեղինակն անդրադարձավ նաև խորհրդահայ պատմագիտության մեջ տիրող ընդհանուր իրավիճակին: Նա համարձակորեն խարազանեց ժամանակի գաղափարախոսության ազդեցությամբ իրականությունից կտրված, փաստական նյութը անտեսելու եղանակով գրված աշխատությունների երևան գալը: «Անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները,– կարդում ենք հոդվածում,– արտահայտվել են պատմության մոդեռնացման՝ հաճախ ցանկալին իրականության տեղ ընդունելու ուսումնասիրության արատավոր եղանակի մեջ ևս: Մի շարք հետազոտություններում, օրինակ, հարցերը առաջ են քաշվում և մեկնաբանվում այնպիսի եղանակով, որ կամա թե ակամա դուրս է գալիս, թե բոլշևիկյան պարտիայի, բոլշևիզմի գաղափարները իրենց առաջացման օրից համակել են ժողովրդական մասսաներին այն աստիճան, որ առաջին բուրժուադեմոկրատական ռևոլյուցիայի տարիներին աշխատավորական մասսաները գրեթե ամբողջությամբ համախմբված գնում էին այդ պարտիայի հետևից: Այդ նույն բանը արդեն առավել անառարկելի էր համարվում 1917 թ. փետրվարյան ռևոլյուցիայի ժամանակ»[1]:

Կուսակցությունը պատմագիտության ոլորտի աշխատողներից պահանջում էր չտարվել պատմական անցյալով, այլ պատմագիտությունը մոտեցնել կյանքին, ասել է թե՝ զբաղվել ժամանակակից հարցերով: Վ. Բարխուդարյանը պարզորոշ ընդիմանում է նաև միակողմանի ու սխալ այդ մոտեցմանը և միանգամայն այլ մեկնաբանություն տալիս թեմայի ակտուալությանը, գիտությունը կյանքին մոտեցնելու հասկացությանը: «Երբեմն միակողմանիորեն է ընկալվում,– գրում է նա,– պատմական թեմայի ակտուալությունը և պատմագիտությունը կյանքին մոտեցնելու հույժ կարևոր խնդիրները: Թեմայի ակտուալությունը միայն նրա ժամանակակից լինելով չի բնորոշվում... Հետևաբար, բնավ զարմանալի չպետք է թվա, եթե ասենք, որ ժամանակակից թեման երբեմն կարող է այնպիսի եղանակով ու որակով ուսումնասիրվել, որ ակտուալ նշանակություն չունենա և ընդհակառակն, հին կամ հնագույն շրջանի թեմաները կարող են

[1] *ՀԽՍՀ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1962, № 6, էջ 10:*

այնպիսի եղանակով ու որակով ուսումնասիրվել, որ ունենան ակտուալ նշանակություն»[2]:

Համանման ձևով վեր են հանվում պատմագիտության մեջ տարածում գտած դոգմատիզմը, աշխատությունների մեջ հաճախ մարքսիզմի դասականներից բերված քաղվածքներով այն առատորեն այն աստիճան ծանրաբեռնելը, որ դրանք փոխարինելու են գալիս փաստական նյութին: Հոդվածում խոսվում է XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազատագրական շարժումները, 1918 թ. Սարդարապատի, Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը ուսումնասիրությունների ոլորտից դուրս թողնելու, Խորհրդային Հայաստանի պատմության միակողմանի հետազոտությունը նրա հիմնավոր, գիտական մշակումով փոխարինելու անհրաժեշտության և պատմագրության մեջ նկատվող այլ թերությունների մասին:

1980-ական թվականների կեսերին Խորհրդային Միության տնտեսապես հետ մնալը հաղթահարելու նպատակով երկրի ղեկավարությունն այն վերակառուցելու գործընթաց սկսեց: Կարճ ժամանակում «վերակառուցումն» իր ոլորտի մեջ առավ նաև գաղափարախոսության, ազգային հարաբերությունների ասպարեզները: Ժողովրդավարական սկզբունքներով գոյություն ունեցող իրավիճակը բարեփոխելու լայն շարժում սկսվեց: Վ. Բարխուդարյանը պրոֆեսոր Լ. Խուրշուդյանի հետ հանդես եկավ անհատի պաշտամունքի ժամանակ և լճացման տարիներին խորհրդահայ պատմագիտության թերացումները վերացնելու ուղենշային հոդվածով՝ ընդգրկելով հայ ժողովրդի ամբողջ պատմությունը: Հայաստանի հին շրջանի պատմության մեջ առաջարկվում էր հայ ժողովրդի կազմավորման մեջ լիաթոք ներառել Ուրարտուի կամ Վանի թագավորությունը: Թեպետև պատմագիտության մեջ ճանաչում է գտել, բայց փաստական նյութերը բավարար կռվան չեն տալիս հին Հայաստանի հասարակարգը համարելու ստրկատիրական: Հետևաբար, անհրաժեշտ է շարունակել և խորացնել այդ ուղղությամբ կատարվող հետազոտությունները՝ գիտականորեն հիմնավորված ու համոզիչ վերջնական տեսակետ մշակելու համար: Հարց բարձրացվեց ուսումնասիրելու մշտապես իր ժողովրդի հետ քայլող և նրա ազգային շահերին ծառայող հայ եկեղեցու պատմությունը: Մի հանգամանք, որում մենք չափից ավելի մտավախություն ենք ցուցաբերել: Այլապես ինչով բացատրել, որ խորհրդային իշխանության միևնույն պայմաններում ռուսական եկեղեցու պատմությունը տպագրվել և վերահրատարակվել է մի քանի անգամ, իսկ Հայաստանում այդ ուղղությամբ բառացիորեն ոչինչ չի արվել: Նորովի, անկաշկանդ մոտեցմամբ վերանայելու շատ ավելի հիմնահարցեր կային խորհրդահայ պատմագիտության նոր և նորագույն շրջաններում: XIX դ. վերջի և XX դ. սկզբի ազգային ազատագրական պայքարի, ազգային կուսակցությունների և հարակից հարցերը կարոտ էին ուսումնասիրության: «Շարադրել հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարի պատմությունը,– ասված է հոդվածում,– առանց ազգային կուսակցությունների գործունեության և հայդուկային շարժման, առանց արևելահայերի՝ այդ պայքարին ցույց տված ակտիվ

[2] *Նույն տեղում, էջ 12:*

մասնակցության, նշանակում է խեղաթյուրել հայ ժողովրդի այդ առասպելական փուլի պատմությունը, այն զրկել գիտականությունից»[3]:

Նոր մոտեցմամբ ուսումնասիրության պահանջ էր դրվում հատկապես 1917–1920 թթ. ընդամենը մի քանի տարվա, սակայն ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող քաղաքական բուռն իրադարձություններով հարուստ շրջանը: Ստեղծել Խորհրդային Հայաստանի գիտական պատմությունը, բուհական ու դպրոցական դասագրքեր և այլն: Այդ ամենը հնարավոր է իրականացնել հարուստ նյութերի ու փաստերի հիման վրա: Հետևաբար, հարց է բարձրացվում շրջանառության մեջ դնել հնարավոր բոլոր սկզբնաղբյուրները, ուսումնասիրողների համար լիովին բացել արխիվների դռները:

Խորհրդային կարգերի փլուզման ընթացքում, երբ հախուռն ժխտվում էր այն ժամանակաշրջանի ամեն մի երևույթ, նման գնահատականի էր արժանանում նաև խորհրդահայ պատմագիտությունը: Այն դիտվում էր իրականությունը միայն խեղաթյուրված ներկայացնող մի բնագավառ: Վ. Բարխուդարյանը հանդես եկավ հակախորհրդային ժողովրդական համընդհանուր շարժմամբ լիցքավորվող զգացմունքային այդ վերաբերմունքի դեմ: Նա գիտական ամսագրում (ՊԲՀ, 1990, № 4) տպագրեց «Խորհրդահայ պատմագրության գնահատության հարցի շուրջը» հոդվածը, ուր լուսաբանեց խորհրդահայ պատմագիտության թերացումներն ու սխալները: Նա միաժամանակ անդրադարձավ սկզբնաղբյուրների հրատարակման և պատմագիտական շատ հարցերի գիտական հետազոտման ուղղությամբ կատարված վիթխարի ձեռքբերումներին: Հետագա տարիներին, սթափ դիտարկմամբ ավելի ամրապնդվեց և ընդհանուր ճանաչում գտավ այդ մոտեցումը:

Հայաստանում անկախ հանրապետության առաջացումը նոր հեռանկարներ բացեց հայագիտության, այդ թվում և պատմագիտության համար: Սակայն անցման շրջանում ստեղծված դժվարությունների պատճառով պատմագիտությունը և հայագիտությունն իր ամբողջության մեջ անկախության ընձեռած հնարավորություններին համապատասխան զարգացման պայմաններ չստացան: Ընդհակառակը, նրանք ընկան ծանր կացության մեջ, ավելի ոչ հուսադրիչ դարձան նրանց շարունակական զարգացման հեռանկարները: Ստեղծված իրավիճակը վերլուծելու և ըստ ամենայնի արժևորելու, ապագա անելիքները ծրագրելու նպատակով Գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը 2003 թ. Երևանում հրավիրեցին Հայագիտական առաջին միջազգային համաժողովը: Գիտական նստաշրջանին մասնակցեցին արտերկրի 72, իսկ Հայաստանի Հանրապետությունից 100-ից ավելի մասնագետներ: Վ. Բարխուդարյանը ակտիվ մասնակցություն ունեցավ գիտաժողովի կազմակերպման և նյութերը առանձին գրքով հրատարակելու գործին: Միջազգային գիտաժողովի լիագումար նիստում նա հանդես եկավ «Հայագիտության արդի վիճակը Հայաստանում և զարգացման հեռանկարները» զեկուցումով: Զեկուցման մեջ արժևորվեցին պատմագիտության մեջ կատարված

[3] *«Խորհրդային Հայաստան», 14. VII. 1989:*

ձեռքբերումները և ուղենշվեցին արդիական նշանակության հիմնահարցերն ու այն խնդիրները, որոնք ծառացած են պատմական գիտության առջև:

Վ. Բարխուդարյանն իր ուսուցիչների և գործընկերների (Աշոտ Հովհաննիսյան, Մկրտիչ Ներսիսյան, Սուրեն Երեմյան, Գագիկ Սարգսյան և ուրիշներ) հոբելյանական տարելիցներին արձագանքել է գիտական պարբերականներում տպագրելով հոդվածներ նրանց գիտական գործունեության մասին: Վաստակաշատ գիտնականներին նվիրված այդ հոդվածներում լուսաբանված են նրանց բերած նորույթը, գիտական ներդրումը: Այդ հոդվածները ևս ունեն պատմագիտական ուղղվածություն և արժևորվում են որպես այդպիսիք:

Վ. Բարխուդարյանը շարունակում է ակտիվ մասնակցություն ունենալ հանրապետության պատմագիտական մտքի ձևավորմանն ու զարգացմանը: Նա երկար տարիներ եղել է ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ և գործուն մասնակցություն է ունեցել դրանց աշխատանքներին:

Նա լուրջ ներդրում ունեցավ Պատմության ինստիտուտի կողմից ստեղծված հայ ժողովրդի հնագույն շրջանից մինչև մեր օրերն ընդգրկող պատմության գիտական-ակադեմիական ութհատորյակի ստեղծման (1960–70-ական թթ.) մեջ՝ որպես հեղինակ, խմբագիր և գիտակազմակերպական աշխատանքները համակարգող:

Անկախություն ձեռք բերելուց հետո դժվարին կացություն ստեղծվեց դպրոցներում մասնավորապես պատմության դասագրքերի հարցում: Հասկանալի պատճառով անհնար էր դարձել նախկին դասագրքերով հայոց պատմության դասավանդումը: Վ. Բարխուդարյանը ստանձնեց հրամայական պահանջ դարձած նոր դասագրքեր ստեղծելու գործը: Նա ընտրեց համապատասխան հեղինակային կոլեկտիվ և կարճ ժամանակում ավարտին հասցրեց այդ կարևոր հանձնարարությունը: Իր խմբագրությամբ լույս տեսան հայ ժողովրդի ամբողջական պատմությունն ընդգրկող չորս դասագիրք, որոնք անկախության հենց առաջին տարիներին հասցվեցին դպրոցներին: Այդ դասագրքերն ունեցել են մի քանի հրատարակություն և մինչ այժմ դպրոցներում ուսուցումը կազմակերպվում է դրանցով:

Վ Բարխուդարյանը Համազգային հայ կրթական և մշակութային միության հայագիտական բարձրագույն հիմնարկի տնօրեն Երվանդ Փամբուկյանի հետ սփյուռքահայ դպրոցների համար դասական ուղղագրությամբ հրատարակեց «Հայոց պատմություն» դպրոցական դասագրքի առաջին գիրքը (Բեյրութ, 1998), որն ընդգրկում էր Հին Հայաստանի պատմության ժամանակաշրջանը: Ցավոք, Բեյրութում համատեղ աշխատանքն ընդհատվելուց հետո, հնարավոր չեղավ իրականացնել հաջորդ հատորների ստեղծումը:

Վ. Բարխուդարյանը առանձնակի ջերմությամբ ու եռանդով է մասնակցում հայոց եկեղեցու հոգևոր ու գիտամշակութային կյանքին: Նա երկար տարիներ Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամ է: Ակտիվ մասնակցություն է ունեցել

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կայացմանը: Գլխավորելով դպրատան գիտական խորհուրդը, ակտիվ դերակատարություն ունեցավ հանրապետության գիտակրթական հաստատությունների և հոգևորականության ուժերով կազմակերպվող գիտաժողովներին ու նյութերի հրատարակությանը: Վերջերս (2005 թ.) նրա խմբագրությամբ հրատարակվեց «Աստվածաշնչական Հայաստան» գիտաժողովի նյութերի մեծարժեք հատորը:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանն ավելի քան չորս տասնամյակ՝ որպես Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, փոխպրեզիդենտ, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ծավալել է գիտական-կազմակերպական ակտիվ գործունեություն: Այսօր էլ, գլխավորելով հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, մեծ եռանդով շարունակում է իր ազգանվեր գործունեությունը Հայաստանում և սփյուռքում՝ հայագիտական ուժերի համախմբման, մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող հումանիտար գիտությունների շարունակական զարգացումն ապահովելու համար:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ